ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն,Արարատի մարզ,
Հնաբերդ համայնք, Գ.Լուսավորիչ փող. 3
Հեռ. 098025050,hnaberd.ararat@mta.gov.am

№139
27 դեկտեմբերի 2016թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 42,43-Ն,44 որոշումների կրկնօրինակները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան
/Հեռ. 055957707/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2016թվականի N 42

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 15 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2016 թվականի թիվ 15 արտահերթ նիստի օրակարգը.

1.Հնաբերդ համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՇՈՒՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
3. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
4. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2016թվականի N 43-Ն

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի 2016 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մաս

1. Վարչական բյուջեի եկամտային մասի «Հարկեր և տուրքեր», այդ թվում «Գույքահարկ փոխադրամիջոցներից» կետը ավելացնել 600.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 2 300.0 հ.դ.:
2. Վարչական բյուջեի եկամտային մասի «Տեղական տուրքեր», որից «Շինությունների շինարարության թույլտվության համար», այդ թվում «Հիմնական շինությունների համար» կետը համարել չեղյալ՝ 2016թ.-ի ընթացքում համայնքում շինարարության թույլտվություն չլինելու պատճառով:
3. Վարչական բյուջեի եկամտային մասի «Տեղական տուրքեր», որից «Շինությունների քանդման թույլտվության համար» կետը համարել չեղյալ՝ 2016թ.-ի ընթացքում համայնքում շինությունների քանդման թույլտվություն չլինելու պատճառով:
4. Վարչական բյուջեի եկամտային մասի «Այլ եկամուտներ», այդ թվում «Վարչական գանձումներ», որից «Տեղական վճարներ, աճուրդի մասնակցության վճար» կետը համարել չեղյալ՝ 2016թ.-ի ընթացքում համայնքում աճուրդ-վաճառք չլինելու պատճառով:
5. Վարչական բյուջեի եկամտային մասի «Այլ եկամուտներ», այդ թվում «Մուտքեր տույժերից և տուգանքներից», որից «Վարչական իրավախախտումների համար» կետը համարել չեղյալ՝ 2016թ.-ի ընթացքում համայնքում վարչական իրավախախտում չլինելու պատճառով:
6. Վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել նոր կետ՝ «Այլ եկամուտներ», այդ թվում «Գույքի վարձակալությունից մուտքեր», որից «Այլ գույքի վարձակալություն» և սահմանել ընդամենը 100.0 հ.դ.:
7. Վարչական բյուջեի եկամտային մասի «Ընդամենը եկամուտներ» կետը ավելացնել 676.5 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 17 130.1 հ.դ.:

Ծախսային մաս

1. Վարչական բյուջեի ծախսային մասը ավելացնել 676.5 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 17 130.1 հ.դ:
2. Ավելացող 676.5 հ.դ. գումարը հատկացնել Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4112 (Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ) հոդվածին՝ համայնքապետարանի աշխատակազմին իրենց վրա դրված պարտականությունները պատշաճ կատարելու պատճառով պարգևատրելու համար:
3. Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4111 (Աշխատավարձ) հոդվածից 18.0 հ.դ. տեղափոխել նույն դասակարգման մեջ նախատեսված 4112 (Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ) հոդվածին:
4. Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4111 (Աշխատավարձ) հոդվածից 14.0 հ.դ. տեղափոխել 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4112 (Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ)

հոդվածին՝ մշակույթի տան աշխատողին իր վրա դրված պարտականությունները պատշաճ կատարելու պատճառով պարգևատրելու համար:
5. Վարչական բյուջեի ծախսային մասի 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4111 (Աշխատավարձ) հոդվածից 64.0 հ.դ. տեղափոխել նույն դասակարգման մեջ նախատեսված 4112 (Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ) հոդվածին:
6. Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4111 (Աշխատավարձ) հոդվածից 90.0 հ.դ. տեղափոխել 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին:
7. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 68.0 հ.դ. տեղափոխել 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին՝ Հնաբերդ համայնքի երեխաների համար Ամանորյա նվերներ ձեռքբերելու նպատակով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՇՈՒՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
3. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
4. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2016թվականի N 44

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համայնքի ,,Դվին հնավայրի՞՞ թանգարանացման և բարեկարգման նախագծի աշխատանքները իրականցնելու նպատակով ,,ՀԷՑ՞՞ ՓԲԸ ,,Արաքս՞՞մասնաճյուղին նոր 157 կվտ. հզորության ուժային տրանսֆորմատոր տեղադրելու համար անհատույց օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 0.012 ծածկագրով թաղամասից 6 քառ.մ. ընդհանուր մակերեսով հողակտոր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՇՈՒՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
3. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
4. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ